*«Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ-ի տնօրեն*

N 1

17 հոկտեմբերի 2025թ.

## ՈՐՈՇՈՒՄ

## ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի և նույն հոդվածի 2-րդ մասի պահանջներով՝ և հիմք ընդունելով ներքոնշյալ աղյուսակում նշված հանգամանք(ներ)ի առկայությունը 'որոշում եմ ստորև բերված աղյուսակում նշված մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

| Գնման ընթացակարգի | | | | Մասնակցի | | | | Պատվիրատուի անվանումը | Իրավական հիմք | Այլ անհրաժեշտ տեղեկատվություն՝ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| ծածկագիրը | չափաբաժնի | | | | | | | | | |
| | համարը | անվանումը | գնման գինը /ՀՀ դրամ/ | Անվանումը | ՀՎՀՀ | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու հանգամանքների առաջացման ամսաթիվը | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 |
| ԵԲԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/50 | 1 | Կոմպրեսոր | 250000 | ՄԽԻԹԱՐՅԱՆ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ ՍՊԸ | 42117958 | Ք.Երևան Շենգենկոյի փողոց 1/14 | 07 հոկտեմբերի 2025թ | «Երևան» բժշկագիտական կենտրոն ՓԲԸ | ***ա. խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին վերջին մասնակցի հեպագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով սահմանված ժամկետում չի վճարել հայցի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը:*** ՀՀ «ԳՆՈՒՄՆԵՐԻ | «Երևան բժշկագիտական կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար էլեկտրոտեխնիկայի ձեռքբերման նպատակով կազմակերպված թիվ ԵԲԳԿ-ԷԱՃԱՊՁԲ-25/50 ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում հայտ ներկայացրած մասնակից «ՄԽԻԹԱՐՅԱՆ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ –ի (այսուհետ՝ նաև Մասնակից) հայտում արձանագրվել են անհամապատասխանություններ, որոնք շտկելու նպատակով վերջինիս eauction.am համակարգի միջոցով ծանուցում է ուղարկվել, հետևյալ |
| | 2 | Ջերմային տպիչ | 350000 | | | | | | | |
| | 3 | Կանչի կոճակ և մոնիտոր | 800000 | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 168-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 526-Ն Որոշման 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ ***եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ներառյալ այն դեպքերը, երբ սահմանված ժամկետում չի շտկում կամ ամբողջական չի շտկում հայտի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման կամ պայմանագրի ապահովումը կամ համաձայնագիրը կնքելու նպատակով պայմանագիրը կնքած անձը չի փոխարինում տուժանքի ձևով ներկայացված որակավորման կամ պայմանագրի ապահովումը, <u>ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:</u>***<br>*41. Եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում* ***արձանագրվում են անհամապատասխանություններ՝*** *հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ* | *բովանդակությամբ՝ ,,«ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում՝ բացակայում է Հավելված 1.3-ը՝ Տվյալներ մասնակցի իրական շահառուների վերաբերյալ:*<br>*«ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում՝ Հավելված 1-ում չի երևում էլեկտրոնային ստորագրության տեսանելի արտապատկերումը և eauction.am համակարգում՝ ապրանքի ամբողջական նկարագիրը դաշտում լրացված չէ ապրանքի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, արտադրողի անվանումը, մակնիշը և տեխնիկական բնութագիրը,,:*<br>eauction.am համակարգով մասնակցին տրվել է մեկ աշխատանքային օր ժամանակ, որպեսզի վերջինս շտկի առկա անհամապատասխանությունները, սակայն սահմանված ժամկետում Մասնակցի կողմից որևէ շտկում չի իրականացվել:<br>Գնահատող հանձնաժողովը, հաշվի առնելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված կարգավորումները, ինչպես նաև այն հանգամանքը, որ «ՄԽԻԹԱՐՅԱՆՍ ՊԼՅՈՒՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ն eauction.am համակարգի միջոցով չի ներկայացրել պարտադիր կատարման ենթակա շտկումները, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով մերժել է Վերջինիս կողմից ներկայացված հայտը:<br>Սույն դեպքում Մասնակցի կողմից թույլ տրված խախտումը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի և ՀՀ «ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | | | *դրանց մի մասը հասպարված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:*<br>*Մասնակցին ուղարկվող ծանուցման մեջ մանրամասն նկարագրվում են հայտնաբերված անհամապատասխանությունները:*<br>*42. Եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում **մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է,** ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:* | ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 10-Ի N 168-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» 526-Ն Որոշման 32-րդ կետի 19-րդ ենթակետի հիմքով համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում, հետևաբար վերջինիս Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելը թե՛ իրավական և թե՛ փաստական առումով հիմնավորված է:<br>Ողջ վերոգրյալը հաշվի առնելով՝ գտնում եմ, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի հիմքով անհրաժեշտ է մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: |

ստորագրություն

ՀՈՎԻԿ ԲԱԼՅԱՆ